ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՏԱՆ-ԴՄ-2021/4-1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղ. Երևան 20 դեկտեմբերի, 2021թ.

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Նարեկ Մելքումյանի (այսուհետ՝ նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս ռեկտոր Դիանա Գալոյանի, ում անունից 2021 թվականի դեկտեմբերի 20-ին տրամադրված լիազորագրի հիման վրա հանդես է գալիս Թաթուլ Մկրտչյանը (նույնականացման քարտ՝ 002025195, տրված 09.09.2014թ. 001-ի կողմից) (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N2215-Ն որոշումը (այսուհետ նաև՝ որոշում) և Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2021 թվականի հունվարի 27-ի ««Մասնագետների պատրաստման բարձրագույն ուսումնական հաստատություններ-մասնավոր հատված համագործակցություն», «Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհներ», «Հայկական վիրտուալ կամուրջ», «Շուկաների զարգացում և միջազգային համագործակցություն» միջոցառումների ծրագրերը հաստատելու մասին» N 61-Ա հրամանը (այսուհետ՝ հրաման), «Աքսելերացիոն ծրագիր «Գաղափարից մինչեւ բիզնես» դրամաշնորհային ծրագրի «նորարարական» բաղադրիչով շահառու հանդիսացող սկսնակ ընկերությունների համար» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացումն ապահովելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5-րդ կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ գումարից 5,840,000 (հինգ միլիոն ութ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Ծրագրով և սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով և սույն պայմանագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով նախարարություն ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է նախարարության և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) նախարարությանն է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, նախարարությունը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա նախարարությունը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում նախարարությունը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում նախարարությունը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը նախարարությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Նախարարությունը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարի 100 (հարյուր) տոկոսը՝ 5,840,000 (հինգ միլիոն ութ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամը պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում փոխանցում է կազմակերպության բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման ակտերի հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն նախարարության կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Նախարարության կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝

վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, Նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 5):

9.2 այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո նախարարությունը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ նախարարությունը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով նախարարության կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4 կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը նախարարությունը հրապարակում է իր պաշտոնական՝ www.hti.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը նախարարությունը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,	ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 128
ՖՆ գործառնական վարչություն	
Հ/Հ 900011031912	Հ/Հ 900018001876
ԿՎՀՀ 02565518	ԿՎՀՀ 01503224
Գլխավոր քարտուղար՝ Նարեկ Մելքումյան	Լիազորված անձ՝ Թաթուլ Մկրտչյան

Հավելված 1
2021թ. դեկտեմբերի 20-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2021/4-1 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N/N	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	Անվանումը	Նկարագիրը	Կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Միջոցառման իրականացման վերջնաժամկետը	Հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1	**Մասնակիցների կարիքների գնահատում**	Տվյալ գործողության նպատակն է պարզել ծրագրի մասնակիցների հիմնական կարիքները, նախանշված դասընթացների նյութերը հետագայում առավել թիրախային դարձնելու նպատակով:	Կարիքների գնահատումը կիրականացվի խորքային հարցազրույցների միջոցով ծրագրի մասնակից 8 սկսնակ գործարարների ներկայացուցիչների հետ: Կարիքների գնահատման համար կմշակվի խորքային հարցազրույցների հարցաթերթ, որը կհաստատվի մենթորների և դասընթացավարների կողմից:	*Արդյունքներ* 1.ծրագրի մասնակիցների կարիքների ամբողջական պատկեր 2.առանձնացված կարիքների խումբ որոնց պետք է արձագանքեն ծրագրով նախատեսված կոնկրետ գործողություններ *Գնահատման չափանիշ* -իրականացված խորքային հարցազրույցների թիվը -կարիքների գնահատմանն ուղղված հարցերի ընդգրկվածության աստիճանը	15-01-2022թ.-21-01-2022թ.	Ծրագրի բովանդակային համակարգողի կողմից դուրս բերված կարքիների հիման վրա կկազմվի կարիքների մատրիցա, որում կարտացոլվեն առկա կարիքները, դրանց կարևորության աստիճանը և դրանց արձագանքելու հնարավորությունը տվյալ ծրագրի շրջանակում: Ներկայացման ժամկետ մինչև 24-01-2022թ.	330,000 դրամ
	Դասընթացի նյութերի «թիրախայնացում» հիմնվելով կարիքների գնահատման և մասնակիցների ոլորտային ներգրավվածությ	Ծրագրում ներգրավված դասընթացավարները ծրագրի համակարգողի կողմից տրամադրված կարիքների գնահատման արդյունքերի հիման վրա առավել թիրախային կմշակեն դասընթացի ընթացքում մատուցվող	Գնահատման հիման վրա կիրականացվի արդյունքների վերլուծություն և առավել թիրախային կմշակեն նախատեսված դասընթացի նյութերը	*Արդյունք* - թիրախային մշակված երկշաբաթյա դասընթացի նյութեր *Գնահատման չափանիշ* -դասընթացի նյութերի բովանդակային և ժամանակային համապատասխանությունը	15-01-2022թ.-21-01-2022թ.	Ծրագրի բովանդակային համակարգողը դասընթացավարներից ստացված դասընթացի նյութերի համապատասխանությունը նախապես նշված ցուցիչներին	200,000 դրամ

	ան վրա	նյութերը:		թիրախավորված խնդիրներին և դասընթացի տևողությանը		վավերացնելուց հետ ներկայացնում է աշխատանքների կատարման հաշվետվություն դասընթացի վերջնական թեմաների տեսքով: Ներկայացման վերջնաժամկետ մինչև 28-01-2022թ,	
	Թեմատիկ դասընթացնե րի իրականացում:	Թեմատիկ դասընթացները կանցկացվեն երեք շաբաթ տևողությամբ; Յուրաքանչյուր դասընթացի թեմա ներկայացվելու է 4 ժամերի ընթացքում (երկուական մուտքով): Դասընթացավարները տեսական նյութը կներկայացնեն գործնական օրինակներով՝ այն առավել հեշտ յուրացնելու նպատակով:	-Դասընթացների անցկացման հստակ ժամանակացույցի կազմում և տարածում մասնակիցների շրջանում; -Դասընթացների տեսական հատվածի իրականացում - դասընթացի որակի գնահատման հարցման իրականացում մասնակիցների շրջանում -դասընթացի նյութերի յուրացման գնահատման հարցման անցկացում	*Արդյունք* 50 մասնակիցների համար անցկացված երկշաբաթյա դասընթաց *Գնահատման չափանիշ* -յուրաքանչյուր դասընթացի ավարտին մասնակիցների կողմից դասընթացի որակի գնահատում՝ նախապես մշակված հարցաթերթի միջոցով: -թեմատիկ դասընթացի ավարտին դասընթացավարների կողմից մշակված թեստերի միջոցով դասընթացի նյութի յուրացման ստուգում	26-01-2022թ.-08-02-2022թ.	Ծրագրի բովանդակային համակարգողի կողմից ներկայացվում է դասընթացների անցկացման վերաբերյալ հաշվետվություն, որում ներկայացվում է դասընթացների անցկացման համապատասխանությունը հաստատված ժամանակացույցին թեմաներին, և այլն: Ներկայացման վերջնաժամկետ մինչև 12-02-2022թ,	350,000 դրամ
	Գործնական առաջադրանքնե րի կատարում:	Գործնական առաջադրանքները կազմելու են թեմատիկ դասընթացների կարևոր բաղկացուցիչը: Գործնական առաջադրանքները իրականացվելու են թեմատիկ	Դասընթացավարների կողմից ստանալով առաջադրանքներ, տվյալ գործողության շրջանակում, ծրագրի մասնակիցները կմշակեն բիզնեսի առաջխաղացման մեծ նշանակություն ունեցող	*Արդյունք* 50 մասնակիցների համար անցկացված երկշաբաթյա դասընթաց *Գնահատման չափանիշ* -յուրաքանչյուր դասընթացի ավարտին մասնակիցների կողմից դասընթացի որակի գնահատում՝ նախապես	26-01-2022թ.-08-02-2022թ.	Ծրագրի բովանդակային համակարգողի կողմից ներկայացվում է դասընթացների անցկացման վերաբերյալ հաշվետվություն, որում ներկայացվում է	350,000 դրամ

		դասընթացներից հետո՝ ապահովելու համար յուրացված գիտելիքների ամրապնդումը և ծանոթացումը կիրառման հնարավորություններին	փաստաթղթեր՝ բիզնեսի զարգացման ռազմավարություն, թվային մարքեթինգի պլան, ներդրողների ներգրավվման ռազմավարություն:	մշակված հարցաթերթի միջոցով: -թեմատիկ դասընթացի ավարտին դասընթացավարների կողմից մշակված թեստերի միջոցով դասընթացի նյութի յուրացման ստուգում		դասընթացների անցկացման համապատասխանությունը հաստատված ժամանակացույցին թեմաներին, և այլն: Ներկայացման վերջնաժամկետ մինչև 12-02-2022թ	
2	**Մենթորների հետ հանդիպում քննարկումներ**	Ծրագրում ներգրավված 4 մենթորներին կկցվեն 8 սկսնակ բիզնեսներ: Յուրաքանչյուր մենթորին կկցվեն երկուական ստարթափեր ըստ թեմատիկ համապատասխանության: Մենթորների հետ աշխատանքի փուլը ենթադրում է շաբաթական առնվազն մեկ հանդիպում: Մենթորների հետ աշխատանքները կմենկնարկեն թեմատիկ դասընթացներին զուգահեռ և կընթանան մինչև ծրագրի ավարտ:	Մենթորների և ծրագրի մասնակիցների հանդիպում և ներկայացում, -մենթորների և ծրագրի մասնակիցների աշխատանքային խմբերի կազմում -մենթորների հետ հանդիպումների ժամանակացույցի և ձևաչափի համաձայնեցում -մասնակիցների մշակված բիզես գաղափարների թույլ կողմերի դուրս բերում և վերլուծություն -մասնակիցների կողմից մշակված բիզնես գաղափարների բարելավմանն ուղղված գործողությունների մշակում	*Արդյունք* -մենթորների հետ համատեղ աշխատանքի շնորհիվ մասնակիցների շրջանում ձեռքբերված նոր կիրառական գիտելիքներ -մասնակիցների բիզնես գաղափարների թույլ կողմերի վերլուծության հիման վրա դրանց վերացման ուղղված մշակված գործողությունների շարք *Գնահատման չափանիշ* -մենթորների հետ իրականացված հանդիպում-քննարկումների քանակը -ծրագրի ավարտին մասնակիցների կողմից ծրագրի տվյալ բաղադրիչից բավարարվածության ցուցանիշը	24-01-2021թ-07-04-2022թ.	Ծրագրի բովանդակային համակարգողը մենթորների կողմից ստացված հանդիպումների վերաբերյալ բանավոր հաշվետվության հիման վրա կներակայացնի մասնակիցների մենթորների հետ աշխատանքի հաշվետվություն: Ներկայացման վերջնաժամկետ մինչև՝ 10-04-2022թ.	2,800,000 դրամ
	Մասնակիցների ոլորտային ներգրավվածությունից կախված	Ծրագրի երկրորդ փուլի շրջանակում նախատեսված է իրականացել մեկ առցանց	ՀՊՏՀ միջազգային գործընկերների ցանցից կընտրվեն մասնակիցների	*Արդյունք* -Փորձագետների կողմից սկսնակ գործարարներին	22-03-2022թ.-11-04-2022թ.	Ծրագրի բովանդակային և տեխնիկական համակարգողները	220,000 դրամ

	միջազգային և տեղական փորձագետների հետ	հանդիպում միջազգային փորձագետների և երեք դեմ առ դեմ հանդիպումներ տեղական ոլորտային փորձագետների հետ: Միջազգային առցանց հանդիպման շրջանակում ծրագրի մասնակիցները կներկայացնեն իրենց նորարական գաղափարները, կստանան փորձագետների մեկնաբանություններ ու խորհուրդներ և հարցեր կհղեն նրանց: Տեղական դեմ առ դեմ հանդիպումների ընթացքում ծրագրի մասնակիցները կծանոթանան հաջողակ բիզնեսի օրինակներին հնարավոյունն կունենան հանդիպել այդ բիզնեսների հիմնադիրների/ ղեկավարներ հետ (ուսումնական այցերի կամ հրավիրված բանախոսությունների ձևաչափով):	ոլորտներին առավել համապատասխանող երեք կազմակերպություններ և նրանց հետ կանցկացվի առցանց հանդիպում քննարկում: Տեղական դեմ առ դեմ հանդիպումների համար կընտրվեն ծրագրի մասնակիցների նորարարական գաղափարներին առավել համապատասխանող հաջողակ բիզնես օրինակներ, ապա կկազմակերպվեն դրանց հիմնադիրների/ ղեկավարներ հետ հանդիպումներ (ուսումնական այցերի կամ հրավիրված բանախոսությունների ձևաչափով):	սեփական փորձառության, խորհուրդների և ուղղորդումների փոխանցում - Ծրագրի մասնակիցների ընդլայնված գործընկերային գործող ցանց ինչպես տեղական, այնպես էլ միջազգային որլորտային փորձագետների և գործընկերների շրջանում *Գնահատման չափանիշ* -անցկացված առցանց և դեմ առ դեմ հանդիպումների քանակը և դրանց մասնակիցների թիվը -ծրագրի ավարտին մասնակիցների կողմից ծրագրի տվյալ բաղադրիչից բավարարվածության ցուցանիշը		կներկայացնեն ամփոփ հաշվետվություն ոլորտային փորձագետների հետ ծրագրի մասնակիցների ունենացծ հանդիպումների վերաբերյալ: Ներկայացման վերջնաժամկետ մինչև՝13-04-2022թ.:	
	Դասընթացների նյութերի հիման վրա ձեռնարկի մշակում (թվային տարբերակ	Ծրագրի շրջանակում նախատեսվում է երեք շաբաթանոց դասընթացի նյութերի հիման վրա պետք է պատրաստվի և առցանց տարբերակով հրապարակվի (բաց հասանելիությամբ) տեսագործնական նյութերի ժողովածու-ձեռնարկ:	-Տեսագործնական ձեռնարկի նախնական տարբերակի պատրաստում ծրագրում ներգրավված դասընթացավարների կողմից և տրամադրում ծրագրի համակարգողներին -Նախնական	*Արդյունք* - սկսնակ գործարարների համար նախատեսված տեսական գիտելիքների և գործնական առաջադրանքների համապարփակ ուղեցույց: *Գնահատման չափանիշ* -սկսնակ գործարաների բիզնես	18-01-2022թ -22-03-2022թ	Ծրագրի բովանդակային և տեխնիկական համակարգողները կներկայացնեն տվյալ գործողության վերջնարդյունքը՝ հաստատված ձեռնարկը և հաշվետվությունը:	350,000 դրամ

		Վերջինս կարող է օգտագործվել սկսնակ գործարարների կողմից որպես տեսական գիտելիքների և գործնական առաջադրանքների համապարփակ ուղեցույց:	տարբերակի հաստատում -Ձեռնարկի խմբագրման և ձևավորման աշխատանքներ - ձեռնարկի վերջնական տարբերակի հաստատում	գաղափարներիառաջխաղացման համար անհրաժեշտ առաջնային թեմաների ներկայացվածությունը ձեռնարկում		Ներկայացման վերջնաժամկետ մինչև՝ 12-04-2022թ.:	
	Մասնակիցների բիզնես արտադրանքի վերաբերյալ առաջխաղացման տեսահոլովակի նկարահանում:	Ծրագրի մասնակիցներին հնարավորություն կտրվի իրենց բիզնես գաղափարը/արտադրանքը հավանական սպառողներին ներկայացնելու համար պատրաստել մինչև մեկ րոպե տևողությամբ տեսահոլովակ:	-Տեսահոլովակի գաղափարի մշակում և քննարում մենթորների հետ -Տեսահոլովակի կառուցվածքի քննարկում նկարահանող խմբի հետ -Բուն նկարահանման աշխատանքներ -Նախնական տարբերակի ներկայացում և շտկումների իրականացում -վերջնական տարբերակի հաստատում և տարածում թիրախային խմբերի շրջանում	*Արդյունք* մասնակիցների բիզնես արտադրանքի վերաբերյալ առաջխաղացման տեսահոլովակ *Գնահատման չափանիշ* -տեսահոլովակների դիտումների քանակը - թիրախային խմբերի ներկայացուցիչների կողմից տեսահոլովակների դիտումներին հաջորդող գրանցված հետադարձ կապի հաջախականությունը և բովանդակությունը	21-03-2022թ.-10-04-2022թ.	Ծրագրի վարչական համակարգողը հստատված տեսահոլովակների առկայության հիման վրա ներկայացնելու է հաշվետվություն տվյալ գործողության կատարման վերաբերյալ: Ներկայացման վերջնաժամկետ մինչև՝ 12-04-2022թ.:	800,000 դրամ
	Միջոցառման անցկացում:	Ծրագրի երրորդ փուլում բոլոր մասնակիցները կներկայացնեն իրենց բիզնես գաղափարները ամփոփիչ միջոցառման ընթացքում:: Միջոցառմանը	-Միջոցառման հայտարարության կազմում և տարածում -միջոցառման հյուրերի շրջանում մասնակցության հաստատման ուղղված	*Արդյունք* -հավանական ներդրողների և գործընկերների համար բարելավված և շուկա մուտք գործելուն պատրաստ բիզնես գաղափար: - Ներդրողների և	30-03-2022թ-13-04-2022թ.	Ծրագրի վարչական և բովանդակային համակարգողների կողմից կներկայացվի միջոցառման անցկացման վերաբերյալ	220,000 դրամ

		կմասնակցեն ներդրումային, գործարար և գիտահետազոտական համայնքի ներկայացուցիչներ: Մասնակիցները կներկայացնեն իրենց գաղափարները, կկիսվեն ծրագրի շրջանակում ձեռք բերած հաջողություններով: Ամփոփիչ միջոցառումը կանցկացվի ՀՊՏՀ-ում: Նախատեսվում է միջոցառմանը 150 մասնակցի ներկայություն: Միջոցառման լուսաբանման համար կհրավիրվեն զլմ-ների ներկայացուցիչներ:	գործողությունների իրականացում (follow up): -միջոցառման տեխնիկական միջոցների ապահովում: -միջոցառման անցկացում	գործընկերների կողմից ներկայացված գաղափարների վերաբերյալ հետաքրքրության արձանագրում *Գնահատման չափանիշ* -միջոցառման մասնակիցների թիվը -միջոցառման արդյունքում ներդրող-սկսնակ գործարար հաստատված համագործակցության քանակը		հաշվետվություն: Ներկայացման վերջնաժամկետ մինչև՝ 15-04-2022թ.	
3	**Որակի գնահատման վերլուծություն և բարելավման վերաբերյալ առաջարկների մշակում**	Ծրագրի ընթացքում և ավարտին կկիրառվեն որակի ապահովման գործիքներ չափելու համար ծրագրի շրջանակում իրականացված գործողությունների արդյունավետությունը դրանց հետագա բարելավման նպատակով: Մասնակիցները ծրագրի շրջանակում երկու անգամ կգնահատեն իրենց բավարարվածությունը. 1-ը կգնահատեն կրթական դասընթացները, 2-ը ամբողջական ծրագիրը:	-կմշակվի դասընթացների արդյունավետության գնահատման հարցաթերթ, դասընթացի մասնակիցների կողմից գիտելիքների յուրացման գնահատման հարցաթերթ և ընդհանուր ծրագրից մասնակիցների բավարարվածության գնահատման հարցաթեր: -Դասընթացների ավարտից հետո կանցկացվի բարարավածության գնահատման հարցումներ	*Արդյունք* -ծրագրի իրականացման բաղադրիչների արդյունավետության վերաբերյալ ամփոփ հաշվետվություն -նմանօրինակ ծրագրերի իրականացման մշակված արդյունավետ մոդել *Գնահատման չափանիշ* -Մասնակիցների բավարարվածության աստիճանը դասընթացներից -մասնակիցների բավարարվածությունը ընդհանուր ծրագրից -Մասնակիցների կողմից մատուցված նյութի յուրացման աստիճանը	11-04-2022թ.-13-04-2022թ.	Ծրագրի վարչական և բովանդակային համակարգողների կողմից կներկայացվի որակի գնահատման վերաբերյալ հաշվետվություն: Ներկայացման վերջնաժամկետ մինչև՝ 13-04-2022թ:	220,000 դրամ

			մասնակիցների շրջանում և գիտելիքների յուրացման հարցումը: -Ծրագրի ավարտին կիրականացվի որակի գնահատման վերլուծություն և բարելավման վերաբերյալ առաջարկների մշակում:				
	Ընդամենը					**5, 840,000 դրամ**	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011031912
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար Նարեկ Մելքումյան

ԿԱՏԱՐՈՂ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 128

Հ/Հ 900018001860
ՀՎՀՀ 01503224
Լիազորված անձ՝ Թագուհի Մելքոնյան

Հավելված 2
2021թ. դեկտեմբերի 20-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2021/4-1 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Հավելված 3
2021թ. դեկտեմբերի 20 -ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2021/4 -1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

	Միջոցառման														
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
1	99999999/45	Դրամաշը -նորհային ծրագիր	01/2021	02/2021	03/2021	04/2021	05/2021	06/2021	07/2021	08/2021	09/2021	10/2021	11/2021	12/2021	**Ընդամենը**
														5,840,000	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011031912
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար Նարեկ Մելքումյան

ԿԱՏԱՐՈՂ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 128

Հ/Հ 900018001876
ՀՎՀՀ 01503224
Լիազորված անձ Դիլարդ Մարգարյան

Հավելված 4
2021թ. դեկտեմբերի 20-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2021/4-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Նախարարություն
_____	_____
_____	_____
Գտնվելու վայրը	Գտնվելու վայրը _____
Հ/Հ _____	Հ/Հ_____
ՀՎՀՀ _____	ՀՎՀՀ_____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Նախարարությունը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	Արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	Փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 5
2021թ. դեկտեմբերի 20-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2021/4-1 պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Change Lab-ը առաջարկվող ծրագրի շրջանակում նպատակ ունի սկսնակ բիզնեսի ներկայացուցիչներին զինել անհրաժեշտ գիտելիքներով եւ գործնական հմտություններով, տրամադրել գործնական կապերը ընդլայնելու նպաստավոր պայմաններ՝ սեփական բիզնես գաղափարը արդյունավետ ճանապարհով շուկա մտցնելու եւ առավելագույն շահույթ ձեւավորելու համար: Երեք ամիս ընդհանուր տևողությամբ առաջարկվող ծրագիրը իր մեջ ներառում է 4 հիմնական բաղադրիչ՝ նախապատրաստական բաղադրի, կրթական եւ գործնական բաղադրիչ, ամփոփիչ միջոցառման բաղադրիչ եւ որակի ապահովման բաղադրիչ: Յուրաքանչյուր բաղադրիչում նախատեսված գործողությունների հաջորդականությունը եւ կիրառվող մեթոդաբանությունը թույլ կտա ծրագրի ավարտին հասնել ծրագրի ընդհանուր նպատակին եւ ենթանպատակներին՝ գրանցելով նախանշված արդյունքները:
Ծրագրի ավարտին ակնկալվում են հետեւյալ արդյունքները՝

- Դասընթացի 50 մասնակիցներ զինված նորարար գաղափարների առաջխաղացման վերաբերյալ
- տեսական գիտելիքներով եւ գործնական հմտություններով
- Մասնակիցների բիզնես գաղափարների բարելավված, շուկայի պահանջներին համապատասխանող
- տարբերակ
- Ծրագրի մասնակիցների ընդլայնված գործընկերային գործող ցանց ինչպես տեղական, այնպես էլ
- միջազգային որլորտային փորձագետների եւ գործընկերների շրջանում
- Նեդրողների եւ գործընկերների կողմից ներկայացված գաղափարների վերաբերյալ հետաքրքրության
- արձանագրում

Ծրագրի նկարագրություն

Հիմնախնդրի հիմնավորում

Նորարական գաղափարները ճիշտ հասցեատիրոջը հասցնելու, շահութաբեր արդյունքներ գրանցելու և հասարակական օգուտ ձևավորելու համար անհրաժեշտ է անցնել համապատասխան գիտելիքների և հմտությունների ձեռքբերման և/կամ հարստացման ճանապարհ: Մասնավորապես նորարարական գաղափարների առաջխաղացմանը և շուկա մուտք գործելն առավել արդյունավետ և դյուրին դարձնելու համար գաղափարի հեղինակները (start up-երը) պետք է ունենան բիզնես մոդելավորման, ֆինանսականպլանավորման, աճի ռազմավարության մշակման, հնարավոր ներդրողներին գործարար ծրագրի ներկայացման կարողություններ և հմտություններ:

Առաջարկվող ծրագրի շրջանակում նախատեսվում է բարձր տեխնոլոգիաների ոլորտին առնչվող նորարարական գաղափարներ ներկայացրած 8 կազմակերպություններին տրամադրել բիզնեսի առաջխաղացման և զարգացման համալիր ծրագիր: Ծրագրով նախատեսված գործողությունների հաջորդականությունը և իրականացման մեթոդաբանությունը հնարավորություն կտա ծրագրի մասնակիցներին զինել անհրաժեշտ տեսական գիտելիքներով և գործնական հմտություններով, որոնց շնորհիվ նրանք կկարողանան մշակել արդյունավետ ռազմավարություններ, իրականացնել բիզնես պլանավորում, նախագծերի կառավարում, ռազմավարական կառավարում: Ծրագրում

ներգրավված մենթորների և ոլորտային փորձագետների շնորհիվ մասնակիցները հնարավորություն կստանան բացահայտել իրենց գաղափարների ուժեղ և թույլ կողմերը, վերլուծել ժամանակակից միտումներ, դուրս բերել արտաքին և ներքին ռիսկերը, ապա համատեղ աշխատանքի, թիրախային խորհրդատվության միջոցով գտնել դրանց շտկման կամ մեղման ուղիները: Ծրագրի մասնակիցները հնարավորություն կստանան իրենց գաղափարները ներկայացնել նաև ՀՊՏՀ-ի միջազգային այն գործընկերներին, որոնք փորձառություն ունեն սկսնանկ բիզնեսների հետ աշխատանքի ոլորտում: Վերջիններս ծրագրի մասնակիցներին կտրամադրեն մասնագիտական խորհուրդներ, ինչպես նաև կծանոթացնեն միջազգային շուկա մուտք գործելու առկա հնարավորություններին և մարտահրավերներին:

ՀՊՏՀ Փոփոխությունների Կառավարման Լաբորատորիայի (այսուհետ՝ Change Lab) կողմից առաջարկվող ծրագրի իրականացման արդյունքում ծրագրի մասնակից սկսնակ գործարարները համապարփակ գիտելիքի, հմտությունների յուրացման և ընդլայնված գործնական կապերի շնորհիվ

- կապահովեն իրենց նորարական գաղափարի արդյունավետ մուտք գործումը տեղական շուկա
- կձևավորեն շահութաբեր բիզնես մոդել
- կբարձրացնեն բիզնես արդյունքի իրացումից ձևավորվող շահույթը
- ինչպես նաև նախնական պատկերացում կստանան միջազգային շուկա մուտք գործելու հնարավորությունների վերաբերյալ:
- կստանան բիզնեսի արդյունավետ վարման գործիքակազմ

Կազմակերպության փորձառությունը

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (ՀՊՏՀ) հանդիսանում է Հայաստանում տնտեսագիտության, կառավարման, ֆինանսների ոլորտում առաջատար բուհը: Փորձառու դասախոսական կազմի և առաջադեմ կրթական մեթոդների կիրառմամբ ՀՊՏՀ-ն իր ուսանողներին տրամադրում է տեսական գիտելիքներ և դրանք գործնական դաշտ տեղափոխելու համար ստեղծում բարենպաստ պայմաններ: ՀՊՏՀ- ում 2013 թվականից գործում է "Ամբերդ" հետազոտական կենտրոնը, որն իրականացնում է հանրային քաղաքականության և տնտեսության տարբեր ոլորտներին առնչվող հետազոտություններ, վերլուծություններ և մշակումներ:

Ուսանողների ձեռնարկատիրական նախաձեռնությունների խթանելու նպատակով 2019 թվականին ՀՊՏՀ- ում հիմնադրվել է Change Lab-ը, որը հանդես է գալիս որպես ինկուբատոր թե՛ դասական կամ սոցիալական ձեռնարկատիրություններ ստեղծելու աջակցման, և թե՛ փոփոխությունների իրականացնող մասնագետների պատրաստման համար:

Change Lab-ի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակում փորձ է արվում համապարփակ և ամբողջական ձևով անդրադառնալ սկսնակ բիզնեսների կառավարման առանձնահատկություններին և կազմակերպություններում փոփոխությունների կառավարման գործընթացներին:

ՀՊՏՀ Change Lab-ի առաքելությունն է զարգացնել ուսանողների և երիտասարդ մասնագետների կառավարչական հմտությունները, մասնավորապես՝ հետևյալ ուղղություններով, վաճառք, մարքեթինգ և սպասարկում, մարդկային ռեսուրսներ, նախագծեր, բիզնես և արտադրական գործընթացներ, ֆինանսական և նյութատեխնիկական միջոցներ:

Change Lab-ը ունի երկու հիմնական ուղղություն՝

- Ինքնազբաղվածություն՝ սկսնակ գործարարներ (start ups) կամ սոցիալական ձեռնարկատիրություն
- Աշխատանքային առաջխաղացում

ՀՊՏՀ Change Lab-ի կողմից իրականացվող ծրագրերում առաջարկվող մեթոդաբանության հիմքում ընկած է գործնական պարապմունքների փոխկապակցված շղթան, որում կրթական/դասընթացների բաղադրիչը կազմում է ընդհանուր ծավալի 20%-ը, իսկ դաշտային աշխատանքներն ու խորհրդատվական բաղադրիչները՝ 80%-ը:

Ստորև ներկայացված են Change lab-ի կողմից իրականացված ծրագրերի վերաբերյալ հակիրճ նկարագրեր:
* ներկայացված ծրագրերի համար նշվել են նախահաշվային արժեքներ քանի որ իրականացված ծրագրերը չեն ունեցել առանձին հատկացված բյուջե, այլ իրականացվել են ՀՊՏՀ-ի ռեսուրսներով (տարածքի տրամադրում, հյուրասիրության կազմակերպում, տեխնիկական միջոցների հատկացում, մասնագետների և վարչական աշխատակազմի ներգրավում)

1. Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերության (ԳՄՀԸ) շրջանակներում «Ստարտափ բուսթ ուիքենդ» (SBW) միջոցառման ընթացքում ՀՊՏՀ Change Lab-ը թիմերին տրամադրել է աջակցություն գաղափարների մշակման և ուղղորդել միջոցառման ողջ ընթացքում կյանքի կոչելու նորարար ստարտափ գաղափարները:

Ժամանակահատված	*Ծրագրի բովանդակություն*	*Նախահաշվայի նարժեք**	*Նպատակ*	*Արդյունքներ*
Ապրիլ 5-26,2021	*-Ծառայությունների մատուցում՝SBW շրջանակներում կազմակերպիչ-ղեկավարի ծառայությունների մատուցում -ՀՊՏՀ Change Lab-ի թիմերը քննարկել Տարբեր ստարտափ գաղափարներ, մենթորների օգնությամբ և խորհուրդներով ընտրել են լավագույններն ու հասել դրանց մշակման փուլին:*	1,000,000 ՀՀ դրամ	*-զարգացնել startup գաղափարներ -աշխատել առաջատար մենթորների հետ -յուրացնել ձեռներեցության հիմունքներ -ներկայացնել գաղափարներ ընտրածառու ժյուրիին -շահել հատուկ մրցանակներ*	*#SBW_Vol7-ի շրջանակներում ՀՊՏՀ 3 խմբերից 1-ը՝ Perfect Look-ը ժյուրիի հավանությանն է արժանացել և զբաղեցրել պատվավոր 3 տեղը:*

2. ՀՊՏՀ Change Lab-ի և ԵՄ աջակցությամբ ստեղծված «ԻՐԻՍ բիզնես ինկուբատոր» հիմնադրամիհետ համագործակցության նպատակներից մեկն է բարելավել և զարգացնել ստարտափերի և ուսանողների գիտելիքները և ձեռնարկատիրական հմտությունները: ՀՊՏՀ Change Lab-ի և ԵՄ աջակցությամբ ստեղծված «ԻՐԻՍ բիզնես ինկուբատոր» հիմնադրամի հետ համատեղ փոխգործակցության շնորհիվ բիզնեսի ոլորտում ուսանողները, ինչպես նաև երիտասարդ մասնագետները, ստացել են մենթորինգի և քոչինգի ծառայություններ ՀՊՏՀ Change Lab-ի կողմից, ծրագրերի շրջանակներում տրամադրվել է pitch-deck հմտությունների զարգացմանն ուղղված խորհրդատվություն՝ գաղափարների ճիշտ ներկայացման վերաբերյալ, իրականցվել է «ՍՏԵՂԾԻ՛Ր ՔՈ ԲԻԶՆԵՍԸ» գաղափարատոն 2021 ուսանողական եռօրյա մրցույթ, որի ընթացքում խմբերին անհատական խորհրդատվություն է տրամադրվել գաղափարներն ուժեղացնելու և իրագործելու նպատակով: Մասնակիցները դիմում հայտերն են ներկայացրել Իրիս ԲԻ-ին գաղափարների ֆինանսավորման նպատակով:

ժամանակահատված	*ծրագրի բովանդակություն*	*Նախահաշվայի նարժեք**	*Նպատակ*	*Արդյունքներ*
Հունիս, 2021-Օգոստոս, 2021	Ծրագրի մասնակիցներին ներկայացրել են բիզնես	1,500,000 ՀՀ դրամ	խթանել երիտասարդներ	70 մասնակից տարբեր բուհերից, որից

	գաղափար գեներացնելու և այն վավերացնելու հիմնական գործիքակազմին գեներացված բիզնես գաղափարները ներկայացրել ժյուրիին լավագույն թիմերին հնարավորություն ընձեռվեց ձեռք բերել ավելի խորացված գիտելիքներ և համապատասխան հմտություններ, այդ թվում նաև՝ բիզնես գաղափարները կյանքի կոչելու նպատակով դիմելու ֆինանսավորման		ի շրջանում հետաքրքրությունը դեպի ձեռներեցություն	հիմնական փուլ են ընդգրկվել 23-ը, և վերջնական գաղափարի ֆինանսավորման հայտ են ներկայացրել 12 դիմորդ, որոնք ներկայացնում են 4 խումբ՝ «Քուիք Չարջ», «ՎԻԱՐ տուրիզմ», «Ագրո UAV» և «Լինգո»: «Քուիք Չարջ» թիմը շարունակում է պայքարը ֆինանսավորման փուլի համար:

3. «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում իրականացվող «Հիրշման կրթաթոշակային ծրագրի» շրջանակներում ՀՊՏՀ Change Lab-ը աջակցել է ՀՊՏՀ Երևանյան և Գյումրու մասնաճյուղերի ուսանողներին թե՛ տեխնիկական, թե՛ բովանդակային մասով ծրագրի մասնակցության գործընթացում: Բոլոր ուսանողները ստացել են մենթորինգի և քոչինգի ծառայություն գաղափարի ձևավորումից մինչև իրականացում փուլը:

Ժամանակահատված	*Ծրագրի բովանդակություն*	*Նախահաշվա յինարժեք**	*նպատակ*	*արդյունքներ*
Ապրիլ, 2021-Մայիս, 2022	Իրականացնել մենթորինգի և քուչինգի ծառայություններ՝ ուսանողների համար՝ կյանքի կոչելու բիզնես գաղափարները	300,000 ՀՀ դրամ	Մենթորինգի և քուչինգի միջոցով ուղղորդել, տրամադրել անհատական խորհրդատվություն ծրագրերի մշակման ուղղությամբ, ինչպես նաևդրանց կազմակերպման և իրականացման գործում	8 ուսանող ապահովվել են ուսման վարձավճարի ամբողջական և մասնակի փոխհատուցում, որից3-ը իրենց բիզնես-գաղափարները կյանքի են կոչել

Ծրագրում ներգրավված անձնակազմի փորձառությունը

Ներկայացրեք ծրագրում ներառված դասընթացավարների, բիզնես խորհրդատուների և մենթորների աշխատանքային գործունեությունը և մրցույթի նպատակներին համապատասխանող փորձառությունը, կցելկենսագրականները:

Նկարագրել նաև ներգրավվող և վճարվող աշխատակիցների և/կամ փորձագետների պատասխանատվության շրջանակը:

Ծրագրի համակարգողներ

Արտակ Ասլանյանը կառավարման փորձագետ, Հայաստանի Պետական տնտեսագիտական համալսարանի «Change Lab»-ի համահիմնադիրը և Executive Management (emanagament.am) համահիմնադիրն ու տնօրենն է: Կառավարման, բիզնես առաջխաղացման և զարգացմանոլորտում մասնագիտական իր փորձը նա սկսել է դեռև 2010-ից՝ աշխատելով տարբեր ընկերություններում:Հանդես է եկել կառավարման և զարգացման փորձագետ ՀՀ Կրթության և գիտության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, Մշակույթի նախարարություններում:

Գրիշա Ամիրխանյանը տնտեսագիտական գիտությունների թեկնածու է: ՀՊՏՀ-ում դասավանդում է «Նորամուծությունների մարքեթինգ» և «Թվային մարքեթինգ» առարկաները: Ներգրավված է տարբեր նախագծերում, որոնք վերաբերում են նորամուծություններին և ստարտափներին: Հանդիսանում է «Elmasys» ստարտափի համահիմնադիր և մարքեթինգի ղեկավար: Ներկայացրել է ստարտափը տարբեր ինկուբացիոն ծրագրերում: ՀՊՏՀ Change lab-ի «Change 4 startups» ծրագրում ներգրավված է եղել որպես մենթոր

Դասընթացավարներ և մենթորներ

Հայկազ Արամյանը (դասընթացավար/մենթոր) լինելով երիտասարդ մասնագետ ունի նշանակալից փորձառություն ներդրումային միջավայրի վերլուծության ոլորտում: Իր աշխատանքային գործունեության վերջին երեք տարիների ընթացքում իրականացրել է ավելի քան 50 սկսնակ բիզնեսների թրեյնինգի և քոուչինգի բիզնեսի զարգացման ֆինանսների և ներդրումների ուղղությամբ:

Տիգրան Մկրտչյան (դասընթացավար) 2014 թվականից աշխատանքային գործունեությունը իրականացնում է թվային մարքեթինգի դաշտում: 2018թվականից հանդիսանալով Ucom հեռահաղորդակցության կազմակերպության թվային մարքեթինգի մասնագետ մշակել և իարականացրել է թվային մարքեթինգի ռազմավարություն, բացահայտում և ներկայացնում էր թվային մարքեթինգի նոր մարտահրավերները, արդյունավետ մեթոդները և տեխնոլոգիաները: 2019 թվականից հանդիսանումէ նաև ՀՊՏՀ դասախոս, իսկ 2021 թվականից ղեկավարում է CoinStats կազմակերպության թվային մարքեթինգի բաժնի ղեկավարը:

Հրաչուհի-Մարի Պողոսյանը (դասընթացավար/մենթոր) մասնագիտությամբ ֆիզիկոս է, Լոնդոնի թագավորական համալսարանի դոկտոր, ԱՄՆ-ի Օդագնացության և տիեզերական տարածության հետազոտությունների ազգային գործակալության (ՆԱՍԱ) աշխատակից, գործարար, «Նորարարության խթանման և հետազոտության կենտրոն»-ի հիմնադիր, սոցիալական նորարարության ոլորտի փորձագետ:ԱՄՆ-ում Օդագնացության և տիեզերական տարածության հետազոտությունների ազգային գործակալությունում (ՆԱՍԱ) աշխատելու տարիներին նա ներառված է եղել տեխնոլոգիաների զարգացման ծրագրի աշխատանքներում, աշխատել փոքր արբանյակների վրա, կազմակերպել նաև դասախոսություններուսանողների համար: Բազմաթիվ են նրա գիտական հետազոտությունները: Մարի-Հրաչուհի Պողոսյանն առաջին անգամ մշակել է տիեզերական սարքերի գնագոյացման մեթոդիկա, որը գիտական նորույթ է:

Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում երկար տարիներ ապրելուց և հեղինակավոր կազմակերպություններում ու կրթական հաստատություններում աշխատելուց հետո 2015-ին տեղափոխվել է Հայաստան, որտեղ գիտական հետազոտություններին զուգահեռ նաև դասավանդում է Երևանի պետական համալսարանում, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում, Հայաստանի ամերիկյան համալսարանում, ինչպես նաև սեմինարներ անցկացնում ԵՊԼՀ-ում, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանում և տեղական տարբեր կազմակերպություններում: Նրա դասախոսությունները ու դասընթացներնն ուղղված են ստեղծարար մտածողության ձևավորմանն ու զարգացմանը:

Դավիթ Իսկանդարյանը (մենթոր) տնտեսագիտության գիտությունների թեկնածու է: 2013 թվականից նա հավաստագրված կառավարման խորհրդատու է (Essentials) (Կառավարման խորհրդատվության ինստիտուտ, Մեծ Բրիտանիա) և 2016 թվականից PMP (Ծրագրի կառավարման ինստիտուտ, ԱՄՆ): 2017 թվականից զբաղեցնում է ֆինանսների փոխնախագահի պաշտոնը PMI Armenia մասնաճյուղում: Նա ունի շուրջ 10-ամյա փորձ ֆինանսական և կառավարման խորհրդատվության ոլորտում: Իր բանկային կարիերան սկսելով 2008 թ.-ին՝ HSBC Բանկ Հայաստան ՓԲԸ-ում՝ որպես առևտրի ֆինանսավորման մասնագետ, այնուհետև զբաղացրել ավելի բարձր պաշտոններ (առևտրային վարկավորման վարչության բիզնես բանկինգի մասնագետ, կորպորատիվ բանկային դեպարտամենտի վարկային կրտսեր կառավարիչ): Աշխատել է «Կոնվերսբանկ» ՓԲԸ-ում որպես առևտրի ֆինանսավորման վարչության պետի տեղակալի պաշտոնը: Ավելի քան 6 տարի ղեկավարել է Դիլիջանի զարգացման հիմնադրամը, վերջին 10 տարիների ընթացքում նաև ներգրավվել է կառավարման տարբեր խորհրդատվությունների և նախագծերի կառավարման խորհրդատվական ծրագրերում՝ մատուցելով բիզնեսի պլանավորման, նախագծերի կառավարման խորհրդատվություն և փորձագիտական աջակցութուն, ներդրումների կառավարման և նախագծերի կառավարման ծառայություններ: Նրա անմիջական ներգրավմամբ մշակվել են ավելի քան 120 բիզնես- պլաններ և ռազմավարական զարգացման ծրագրեր: Նա PMA ՍՊԸ-ի կառավարման գործընկերն է, որը մատուցում է նախագծերի կառավարման խորհրդատվական և կառավարման խորհրդատվականծառայություններ:

Դավիթ Իսկանդարյանն ունի ավելի քան 10 տարվա գիտական փորձ: 2006 թվականից Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի դասախոս է: Ուսուցման հիմնական ոլորտները ներառում են դասընթացներ նախագծերի կառավարման և բանկային գործունեության վերաբերյալ: Դասավանդման փորձի ընթացքում նա ներգրավվել է տարբեր նախագծերի, որոնք վերաբերում են բիզնեսի պլանավորմանը և նախագծերի կառավարման ոլորտներին: Նրա համաձայնությամբ շատ ուսանողներ նախաձեռնել և իրականացրել են իրենց մեկնարկային նախագիծը, որտեղ Դ. Իսկանդարյանի դերը հիմնականում նախագծի կառավարման հետ կապված գործընթացների խթանումն էր: 2021թ. հուլիսից նա աշխատում է նաև որպես ծրագրերի

ղեկավար «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ԱՀԿՄԿ)» հիմնադրամում:
Ներսես Գևորգյանը (դասընթացավար) կրթության ոլորտի փորձագետ է ավելի քան 23 տարվա աշխատանքային փորձով: Եղել է նախարարի խորհրդական ՀՀ կրթության և գիտության նախարարությունում, աշխատել մի շարք միջազգային հեղինակավոր կազմակերպություններում, այդ թվում՝ Համաշխարհային բանկ, CARE International (Cooperative for Assistance and Relief Everywhere), ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ (UNHCR), Եվրոպայի խորհուրդ: Շուրջ 10 տարի ղեկավարել է Եվրոպայի խորհրդի բարձրագույն կրթության հանձնաժողովի Հայաստանի պատվիրակությունը: Ներսես Գևորգյանը ԱՄՆ Ֆուլբրայթի ծրագրի մասնակից է, 7 տարի եղել է Ֆուլբրայթ կրթաթոշակի և Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD) կրթաթոշակի ընտրական հանձնաժողովի խորհրդի անդամ: Եղել է ՀՊՏՀ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության կառավարման ամբիոնի վարիչ: Դասավանդել է ՀՊՏՀ-ում՝ կրթության կառավարման, ռազմավարական կառավարման, բիզնեսի էթիկայի և հակամարտության կարգավորման ուղղվածությամբ: Համակարգում է մի շարք միջազգային ծրագրեր: Ներկայումս նաև ՀՊՏՀ Ֆոնդահայթայթման բաժնի ղեկավարն է:
Լիանա Լոբասյանը (դասընթացավար) իրավաբան է, սովորել է նաև ԱՄՆ իրավունքի դպրոցի Չիկագո – Քենթի իրավաբանական քոլեջում: Նա իր մասնագիտական գործունեությունը սկսել է 2007 թվականից՝ աշխատելով տարբեր կազմակերպություններում, այդ թվում՝ «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահի աշխատակազմում որպես տնօրենի խորհրդական: Նա ՀՀ Փաստաբանների պալատի անդամ է:
Ռոզե Աբրահամյան (դասընթացավար) մարքեթինգի և կառավարման մասնագետ է: Ունի ավելի քան ութ տարվա մասնագիտական փորձ: Աշխատել է որպես մարքեթինգի մենեջեր «Ջերմուկ ինթերնեյշնլ Պեպսի- կոլա բոթլեր» ՍՊԸ-ում, մարքեթինգի տնօրեն, այնուհետև գործադիր տնօրեն՝ «Միմո բայք»-ում, տարածաշրջանային մենեջեր՝ SoftConstruct-ում և այլն: 2017 թվականից Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի դասախոս է, իսկ 2019-ից՝ Management Mix-ի դասընթացավար:
Հրայր Մովսիսյանը (դասընթացավար) տեղեկատվական համակարգերի անվտանգության մասնագետ և ծրագրավորող է: Աշխատել է որպես Agile Project Manager, Scrum Master այն տարբեր ընկերություններում:2021թ. մայիսից աշխատում է BetConstruct-ում որպես Enterprise Architect: SS նախագծերի կառավարման թեմայով դասընթացներ է վարել ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունումև Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:
Վադիմ Գրիգորյան (մենթոր) Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ապրանքագիտություն և ապրանքի որակի փորձագիտության տնտեսագիտության թեկնածու է: 2 թվականից ՀՊՏՀ Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկանի տեղակալ, Մարքեթինգի ամբիոնի դոցենտ, ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետ է: Եղել է ՀՊՏՀ change lab-ի կողմից կազմակերպված «Ստարտափ բուսթ ուիքենդ» ծրագրի մենթոր:
Մարինե Խաչատրյանը (դասընթացավար) 2015 թվականից աշխատում է ֆինանսական պլանավորմանև ռազմավարության ոլորտում: Ներկայումս Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) Ֆինանսների և գործառնությունների ղեկավարն է: Նախկինում աշխատել է «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ-ում որպես ֆինանսական հաշվետվությունների մասնագետ:

Ծրագրի բովանդակությունը և ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է խթանել սկսնակ գործարարների գաղափարների առաջխաղացումը և շուկա մուտք գործելուն/ամրապնդվելուն՝ համապարփակ տեսական ու գործնական գիտելիքների տրամադրման, մենթորության ու ոլորտային փորձագիտական աջակցության, գործական ցանցի ընդլայնման հնարավորության տրամադրման միջոցով:
Ծրագրի ենթանպատակներ՝

- Ապահովել ծրագրի մասնակից սկսնակ գործարարներին նորարար գաղափարների առաջխաղացման վերաբերյալ անհրաժեշտ տեսական գիտելիքներով և գործնական հմտություններով՝ երկշաբաթյա դասընթացների միջոցով:
- Ապահովել սկսնակ գործարարների նորարական գաղափարների համապատասխանեցումը շուկայի/սպառողների պահանջներին՝ մենթորների հետ անհատականացված աշխատանքների իրականացման միջոցով:

- Ստեղծել անհրաժեշտ պայմաններ ծրագրի մասնակից սկսնակ գործարարների գործընկերային ցանցի ընդլայնման համար, ինչպես տեղական, այնպես էլ միջազգային հարթակում նախատեսված ցանցային միջոցառումների (networking events) և գաղափարների ներկայացման (demo pitch) միջոցառումների միջոցով:
- Ապահովել նորարար գաղափարների ներկայացումը ինչպես ներդրողների համայնքին, այնպես էլ սպառողների և գործընկերների խմբին:

Ծրագիրը բաղկացած է 4 հիմնական բաղադրիչից՝

1. ***Նախապատրաստական բաղադրիչ.*** Տվյալ փուլի շրջանակներում կիրականացավի ծրագրի մասնակից սկսնակ գործարարների կարիքների խորքային վերլուծություն և գնահատում: Այս փուլում մասնակիցները կունենան հանդիպումներ մենթորների և ծրագրի դասընթացավարների հետ, կծանոթանան ծրագրի ամբողջ ընթացքին և յուրաքանչյուր փուլի վերաբերյալ մանրամասներին:

Տվյալ փուլում դասընթացավարները, հիմնվելով կարիքների գնահատման վրա, առավել թիրախային պետք է դարձնեն դասընթացի համար նախատեսված կրթական նյութերը:

2. ***Կրթական և գործնական բաղադրիչ.*** Տվյալ փուլում կանցկացվեն թեմատիկ դասընթացներ, առցանց և դեմ առ դեմ հանդիպումներ ոլորտային փորձագետների հետ, կիրականացվեն մենթորների հետ անհատականացված աշխատանքներ և կկազմակերպվեն նորարարական գաղափարների նախնական ներկայացումներ թիրախային տարբեր խմբերի համար:

Դասընթացների անցկացում. Թեմատիկ դասընթացներ անցկացվելու են հետևյալ ուղղություններով՝

1. Սկարտափների ֆինանսավորման փուլերն ու ներդրումային գործիքները Դասընթացավար՝ Հայկազ Արամյան

Այս դասընթացի շրջանակներում ստարտափները կծանոթանան

- ստարտափների ֆինանսավորման փուլերին, և այդ փուլերում առկա ներդրումային աղբյուրներին (հրեշտակ ներդրողներ, աքսելերատորներ, վենչուրային ֆոնդեր, քրաուդֆանդինգ)
- Առանձին անդրադարձ կկատարվի փոխարկելու գործիքների վրա, ինչպիսին է SAFE գործիքը: Ստարտափները կծանոթանան գործիքի հիմնական առանձնահատկություններին և կիրառման մեխանիզմներին:
- Կներկայացվեն կազմակերպության գնահատման հիմնական մոտեցումները

2. Թվային մարքեթինգ սկարտափների համար Դասընթացավար՝ Տիգրան Մկրտչյան

Դասընթացի նպատակն է ստարտափների մոտ պատկերացում ձևավորել թվային մարքեթինգի ժամանակակից ուղղություններից մեկի՝ growth marketing-ի մասին, որն արդիական է հատկապես ստարտափների համար: Դասընթացի ընթացքում կուսումնասիրվեն ժամանակակից տեխնոլոգիական ընկերությունների կողմից կիրառվող մոտեցումները, մասնավորապես անդրադարձ կկատարվի հետևյալ ուղղություններին.

- Հաճախորդների ներգրավում (acquisition)
- Հախաճորդների պահպանում և ներգրավվածության բարձրացում (retention and engagement)
- Մոնետիզացիա
- Աճի մոդելներ (growth models)
- Աճի օղակներ(growth loops)

3. Մտավոր սեփականության պաշտպանության խնդիրները սկարտափներում Դասընթացավար՝ Լիանա Լոբասյան

Ցանկացած բիզնես իր գործունեությունում օգտագործում է ապրանքային նշաններ, գաղտնի տեղեկատվություն, ծրագրային ապահովում և մտավոր սեփականության իրավունքի այլ օբյեկտներ: Ճիշտ օգտագործման դեպքում դրանք հանդիսանում են հաջողության կարևոր գրավական, իսկ սխալ կամ անզգույշ օգտագործումը կարող է հանգեցնել լուրջ իրավական ու ֆինանսական խնդիրների: Նորարարական պրոդուկտներ առաջարկող տարտափների մոտ խնդիրն ավելի սուր է արտահայտված: Դասընթացի նպատակն է մասնակիցների մոտ պատկերացում ձևավորել մտավոր սեփականության հիմնական տեսակների, դրանց գրացման, պաշտպանության և խախտումների դեմ պայքարի մեխանիզմների մասին ինչպես ՀՀ-ում, այնպես էլ միջազգային մակարդակում: Դասընթացի շրջանակներում անդրադարձ կկատարվի հետևյալ թեմաներին.

- Ֆիրմային անվանում և ապրանքային նշան

- Ապրանքային նշանի գրանցման կարգը. Նիցցայի դասակարգիչ
- Ապրանքային նշանի պաշտպանությունը ՀՀ տարածքից դուրս
- Արդյունաբերական նմուշ. գրանցման կարգը և պաշտպանության ձևերը

4. ***Բրենդինգ***

Դասընթացավար՝ Ռոզա Աբրահամյան

Արդյունավետ բրենդի ստեղծումը և զարգացումը շատ կարևոր է ստարտափների համար ինչպես կարճաժամկետում, այնպես էլ երկարաժամկետ հաջողության հասնելու համար: Դասընթացի նպատակն է օգնել ստարտափներին ստեղծել հիմքեր ներգրավող և գրավիչ բրենդ ունենալու համար, որը կօգնի ոչ միայն տարբերակվել և առաջմղել իրենց առաջարկը շուկայում, այլև հստակեցնել իրենց բրենդի էությունը և գաղափարը, սահմանել առաքելությունը, տեսլականը և արժեքները: Դասընթացի ընթացքում մասնավորապես կքննարկվեն հետևյալ թեմաները.

- բրենդի ասոցիատիվ քարտեզի ստեղծում օրբիթեր հարցաշարի միջոցով
- խորքային և տարբերակիչ արժեքների ուսումնասիրություն և խմբավորում՝
- բրենդ-հաճախորդ էմոցիոնալ կապի ստեղծում
- կազմակերպության առաքելության, տեսլականի և արժեքների սահմանում

5. ***Նախագծերի կառավարում՝ Agile միջավայրը որպես ստարտափի խթանիչ***

Դասընթացավար՝ Հրայր Մովսիսյան

Այս դասընթացի շրջանակներում ստարտափները

- կծանոթանան նախագծերի կառավարման ընդհանուր հիմունքներին
- կուսումնասիրեն Agile մեթոդոլոգիային, դրա առանձնահատկություններն ու առավելությունները
- կկարողանան կիրառել նախագծորի կառավարման տարածված գործիքներն ու մեթոդները

6. ***Ռազմավարական բիզնես մտածողություն ստարտափների և ձեռներեցների համար***

Դասընթացավար՝ Մարի Պողոսյան

Դասընթացի շրջանակներում ստարտափները կծանոթանան

- Ինչպես սկսել և վարել ստարտափի ֆինանսական հաշվառումը համակարգված գործունեություն ունենալու համար,
- Ֆինանսական պլանավորում ստարտափների համար,
- Ֆինանսական մոդելավորում դրամական հոսքերի (Cash flow) հիման վրա,
- Ծանոթացում հիմանական ֆինանսական ցուցանիշներին և ֆինանսական վերլուծությանը

7. ***Ֆինանսներ ստարտափների համար***

Դասընթացավար՝ Մարինե Խաչատրյան

Դասընթացի շրջանակներում ստարտափները կծանոթանան

- Ինչպես սկսել և վարել ստարտափի ֆինանսական հաշվառումը համակարգված գործունեություն ունենալու համար,
- Ֆինանսական պլանավորում ստարտափների համար,
- Ֆինանսական մոդելավորում դրամական հոսքերի (Cash flow) հիման վրա,
- Ծանոթացում հիմանական ֆինանսական ցուցանիշներին և ֆինանսական վերլուծությանը

8. ***Ֆոնդահայթայում ստարտափների համար***

Դասընթացավար՝ Ներսես Գևորգյան

Դասընթացի ընթացքում մասնակիցներին կներկայացվի

- ֆոնդահայթայթման հիմնական գործիքները
- Ֆոնդահայթայթման աղբյուրների որոնում և ֆոնդերի տնօրինում

9. ***Պրեզենտացիոն հմտություններ***

Դասընթացավար՝ Ռոզա Աբրահամյան

Ստարտափների համար իրենց գաղափարի, պրոդուկտի կամ բիզնես մոդելի համառոտ և բովանդակալից ներկայացումը զարգացման տարբեր փուլերում չափազանց կարևոր է: Ստարտափները հաճախ առնչվում են իրենց ճիշտ ներկայացնելու խնդրին տարբեր դրամաշնորհային ծրագրերին, հրեշտակ ներդրողներին, վենչուրային ֆոնդերին կամ հաճախորդներին ներկայանալիս: Դասընթացը նպատակ ունի ստարտափերների մոտ զարգացնել պրեզենտացիոն հմտությունները, որի ընթացքում անդրադարձ է կատարվելու հետևյալ թեմաներին.

- Pitching-ի հմտություններ
- Pitch Deck-ի կազմման մեթոդաբանություն

- Հոետորական արվեստ

Առցանց և դեմ առ դեմ հանդիպումներ ոլորտային փորձագետների հետ. Ծրագրի երկրորդ փուլի շրջանակում նախատեսված է իրականացել մեկ առցանց հանդիպում միջազգային փորձագետների և երեք դեմ առ դեմ հանդիպումներ տեղական ոլորտային փորձագետների հետ:

Միջազգային առցանց հանդիպման շրջանակում ծրագրի մասնակիցները հնարավորություն կունենան հակիրճ ներկայացնել իրենց նորարական գաղափարները, ստանալ փորձագետների մեկնաբանություններ ու խորհուրդներ և հարցեր հղել նրանց:

Տեղական դեմ առ դեմ հանդիպումների համար կընտրվեն ծրագրի մասնակիցների նորարարական գաղափարներին առավել համապատասխանող հաջողակ բիզնես օրինակներ, ապա կկազմակերպվեն դրանց հիմնադիրների/ ղեկավարներ հետ հանդիպումներ (ուսումնական այցերի կամ հրավիրված բանախոսությունների ձևաչափով):

Աշխատանք մենթորների հետ. Թեմատիկ դասընթացներին զուգահեռ ծրագրի երկրորդ փուլում կմեկնարկի նաև մենթորների հետ աշխատանքը, որը կիրականացվի ծրագրի ողջ ընթացքում: Ծրագրում ներգրավված 8 մենթորներին կկցվեն 2-ական սկսնակ բիզնեսներ: Մենթորները ծրագրի ողջ ընթացքում անհատականացված աշխատանքի միջոցով կօգնեն սկսնակ գործարարներին դուրս բերել իրենց բիզնեսգաղափարի կենսունակության բարձրացման համար անհրաժեշտ գործողությունները, մշակելառաջխաղացման ռազմավարություն, վերլուծել և հասկանալ բիզնես գաղափարի/արտադրանքի համապատասխանությունը շուկային և մշակել շուկա մուտք գործելու արդյունավետ ռազմավարություն: Մենթորները իրենց կցված բիզնեսների հետ պետք է ունենան առնվազն մեկ շաբաթական հանդիպումներ (առցանց կամ դեմ առ դեմ), իսկ անհրաժեշտության և փոխադարձ համաձայնության դեպքում ունենալ լրացուցիչ հանդիպումներ: Մենթորների հետ զուգահեռ ծրագրի մասնակից սկսնակ բիզնեսների հետ կաշխատեն նաև Change lab-ի տարբեր ծրագրերի շրջանավարտներ (ՀՊՏՀ ուսանողներ մարքեթինգի, ֆինանսների և կառավարման ֆակուլտետներից), ովքեր իրենց փորձով կկիսվեն, կօգնեն բիզնես գաղափարիդեպի շուկա տեղափոխելու աշխատանքների իրականացմանը:

Նորարարական գաղափարների նախնական ներկայացումներ թիրախային տարբեր խմբերի համար. Երկրորդ փուլի ավարտին ՀՊՏՀ-ում կանցկացվեն ծրագրի մասնակիցների բիզնես գաղափարների նախնական ներկայացում պոտենցիալ օգտատերի, բիզնես համայնքի շրջանակում: Հանդիպումները հնարավորություն կտան ստացված հետադարձ կապի միջոցով ինչպես կատարելագործել բիզնես գաղափարը, այնպես էլ բարելավել ներկայացման հմտությունները և պատրաստվել ներդրողների հետ ավարտական ներկայացմանը:

Սկսնակ բիզնեսների առաջխաղացման համար տեսահոլովակի նկարահանում: Ծրագրի մասնակից 8 սկսնակ բիզնեսների համար կպատրաստվի առաջխաղացման տեսահոլովակ: Վերջինս նպատակ ունի գրավիչ, վիզուալ լուծումներով ներկայացնելու բիզնես արտադրանքը թիրախային լսարանին/սպառողին:նախատեսված տեսահոլովակների տևողությունը սահմանվում է մինչև 1 րոպե:

3. ***Բիզնես գաղափարների ներկայացում (ամփոփիչ միջոառում).***

Ծրագրի երրորդ փուլում բոլոր մասնակիցները կներկայացնեն իրենց բիզնես գաղափարները ամփոփիչ միջոցառման ընթացքում: Միջոցառմանը կմասնակցեն ներդրումային, գործարար և գիտահետազոտական համայնքի ներկայացուցիչներ: Մասնակիցները կներկայացնեն իրենց գաղափարները, կկիսվեն ծրագրի շրջանակում ձեռք բերած հաջողություններով:

Ամփոփիչ միջոցառումը կանցկացվի ՀՊՏՀ-ում: Նախատեսվում է միջոցառմանը 150 մասնակցի ներկայություն: Միջոցառման լուսաբանման համար կհրավիրվեն զլմ-ների ներկայացուցիչներ:

4. ***Որակի ապահովում.*** Ծրագրի ընթացքում և ավարտին կկիրառվեն որակի ապահովման գործիքներ չափելու համար ծրագրի շրջանակում իրականացված գործողությունների արդյունավետությունը դրանց հետագա բարելավման նպատակով: Մասնակիցները ծրագրի շրջանակում երկու անգամ կգնահատեն իրենց բավարարվածությունը. 1-ը կգնահատեն կրթական դասընթացները, 2-ը ամբողջական ծրագիրը: Առաջին գնահատման շրջանակում յուրաքանչյուր թեմատիկ դասընթացի ավարտին մասնակիցները կգնահատեն դասընթացի որակը (մատուցված նյութի մատչելիությունը, արդիականությունը և այլն): Երկրորդ գնահատումը կանցկացվի ծրագրի ավարտին, որի շրջանակում մասնակիցները կգնահատեն ծրագրի շրջանակներում իրականացված գործողությունների կազմակերպչական բաղադրիչը, որակական աստիճանը, անցկացված միջոցառումների արդյունավետությունը և համապատասխանությունը իրենց ակնկալիքներին:

Իրենց հերթին ծրագրի մասնակիցները երկշաբաթյա դասընթացի ավարտին կանցնեն գնահատում/թեստավորում հասկանալու համար նյութի յուրացման մակարդակը: Թեստավորումը հնարավորություն կտա մասնակիցներին հասկանալ այն թեմաները, ուղղությունները որտեղ առկա են նյութի ընկալման թերացումներ, ապա մենթորների օգնության շնորհիվ ծրագրի հետագա ընթացքի ժամանակ կենտրոնանալ դրանց ուսումնասիրման վրա:

Ծրագրի շարունակականություն

Ծրագրի շրջանակում նախատեսվում է երեք շաբաթանոց դասընթացի նյութերի հիման վրա պատրաստել և առցանց տարբերակով հրապարակել (բաց հասանելիությամբ) տեսագործնական նյութերի ժողովածու-ձեռնարկ: Վերջինս կարող է օգտագործվել սկսնակ գործարարների կողմից որպես տեսական գիտելիքների և գործնական առաջադրանքների համապարփակ ուղեցույց: Ձեռնարկի տարածումը թիրախային խմբերի շրջանում (համալսարանական ինկուբատորներ սկսնակ ձեռներեցների, նորարարական գաղափարի հեղինակների համար) կապահովի անվճար թեմատիկ նյութերի հասանելիություն և կնպաստի նրանց կողմից նախանշված նպատակներին հասնելու ճանապարհին լինել գիտելիքներով և հմտություններով զինված:

Ծրագրի լուսաբանում

Ծրագրի իրագործման ողջ ընթացքում միջոցառումների անցկացման վերաբերյալ հայտարարությունները, օգտակար նյութերը, ծրագրի արդյունքների և ընթացքի վերաբերյալ այլ մանրամասները կհրապարակվեն ՀՊՏՀ-ի պաշտոնական կայք էջի, ֆեյսբուքյան էջի, Change lab-ի ֆեյսբուքյան էջի միջոցով: Իսկ ամփոփիչ միջոցառման լուսաբանման համար կհրավիրվեն նաև զլմ-ների ներկայացուցիչներ: Բացի այդ ՀՊՏՀ համապատասխան ստորաբաժանման կողմից ստարտափների հետ կանցկացվեն և կհրապարկվեն մասնագիտական հարցազրույցներ, վերջիններիս համար հավելյալ տեսանելիություն ապահովելու համար:

ՀՊՏՀ ներդրումը

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը ծրագրի իրականացման ողջ ընթացքում ծրագրի շահառուներին պատրաստ է տրամադրել, ինչպես մարդկային այնպես էլ նյութատեխնիկական ռեսուրսներ, մասնավորապես

1. հարմարավետ աշխատանքային տարածք (coworking space)
2. տեխնիկական սարքավորումներ
3. հասանելիություն գրադարանի առցանց և թղթային ռեսուրսներին
4. Change lab-ի շրջանավարտների/ՀՊՏՀ ուսանողների ներգրավումը ծրագրում որպես կամավորներ
5. ՀՊՏՀ միջազգային և տեղական գործընկերային ցանցի ներգրավում
6. ՀՊՏՀ տարածքի տրամադրում ծրագրային փոքր և մեծ ծավալի միջոցառումների անցկացման համար:

Նպատակ	***Ենթանպատակ***	***Գործողություններ***	***Գնահատման ցուցանիշ***	***Ակնկալվող արդյունքներ*(outputs)**	***Վերջնարդյունք* (outcomes)**
Խթանել սկսնակ գործարարների գաղափարների առաջխաղացումը և շուկա մուտք գործել/ամրապնդվելը՝ համապարփակ տեսական և գործնական գիտելիքների տրամադրման, մենթորության և ոլորտային փորձագիտական աջակցության տրամադրման միջոցով:	Ապահովել ծրագրի մասնակից սկսնակ գործարարներին նորարար գաղափարների առաջխաղացման վերաբերյալ անհրաժեշտ տեսական գիտելիքներով և գործնական հմտություններով՝ երկշաբաթյա դասընթացների միջոցով	-մասնակիցների կարիքների գնահատում -դասընթացի նյութերի «թիրախայնացում»՝ հիմնվելով կարիքների գնահատման և մասնակիցների ոլորտային ներգրավվածության վրա -թեմատիկ դասընթացների իրականացում -գործնական առաջադրանքների կատարում	-Յուրաքանչյուր դասընթացի ավարտին մասնակիցների կողմից դասընթացի որակի գնահատում՝ նախապես մշակված հարցաթերթի միջոցով -թեմատիկ դասընթացի ավարտին դասընթացավարների կողմից մշակված թեստերի միջոցով դասընթացի նյութի յուրացման ստուգում	-սկսնակ բիզնեսներիառաջխաղացման վերաբերյալկարճ դասընթացի առցանց ձեռնարկ -50 մասնակիցների համար անցկացված երկշաբաթյադասընթաց	Դասընթացի 50 մասնակիցներ զինված նորարար գաղափարների առաջխաղացման վերաբերյալ տեսական գիտելիքներով և գործնական հմտություններով
	Ապահովել սկսնակ գործարարների նորարական գաղափարների համապատասխանեցումը շուկայի/սպառողների պահանջներին՝ մենթորներիհետ անհատականացված աշխատանքների իրականացմանը միջոցով	-մեթորների հետ շաբաթական հանդիպում քննարկումներ -ծրագրի մասնակիցների բիզնես արտադրանքի վերաբերյալ առաջխաղացման տեսահոլովակի պատրաստում	-մենթորների հետ իրականացված հանդիպում-քննարկումների քանակը -ծրագրի ավարտին մասնակիցների կողմից ծրագրի տվյալբաղադրիչից բավարարվածության ցուցանիշը	-մենթորների հետ համատեղաշխատանքի շնորհիվ մասնակիցների շրջանումձեռքբերված նոր կիրառական գիտելիքներ -մասնակիցների բիզնես գաղափարների թույլ կողմերիվերլուծության հիման վրադրանց վերացման ուղղված մշակված գործողությունների շարք -մասնակիցների բիզնես արտադրանքի վերաբերյալ	Մասնակիցների բիզնես գաղափարների բարելավված տարբերակ

				առաջխաղացման տեսահոլովակ	
	Ստեղծել անհրաժեշտ պայմաններ ծրագրի մասնակից սկսնակ գործարարների գործընկերային ցանցի ընդլայնման համար ինչպես տեղական, այնպես էլ միջազգային հարթակում նախատեսված ցանցային (networking events) միջոցառումն երի և	Մասնակիցների ոլորտային Ներգրավվածությունից կախված Միջազգային և տեղական փորձագետների հետ առցանց և դեմ առդեմ հանդիպումների կազմակերպում	-անցկացված առցանց և դեմ առ դեմհանդիպումների քանակըև դրանց մասնակիցներիթիվը -ծրագրի ավարտին մասնակիցների կողմից ծրագրի տվյալբաղադրիչից բավարարվածության ցուցանիշը	Փորձագետների կողմից սկսնակ գործարարներին սեփական փորձառության, խորհուդների և ուղղորդումների փոխանցում	Ծրագրի մասնակիցների ընդլայնված գործընկերային գործող ցանց ինչպես տեղական, այնպես էլ միջազգային որլորտային փորձագետների և գործընկերների շրջանում

Գործողություններ

1. **Ծրագրի մասնակիցների կարիքների գնահատում**: Տվյալ գործողությունը համարվում է ծրագրի մեկնարկային գործողությունը: Վերջինս նախատեսվում է իրականացնել ծրագրի շջանակում ներգրավված դասընթացավարներ և մենթորների մասնակցությամբ: Կարիքների գնահատումը կիրականացվի խորքային հարցազրույցների միջոցով ծրագրի մասնակից 8 սկսնակ գործարարների ներկայացուցիչների հետ: Կարիքների գնահատման համար կմշակվի խորքային հարցազրույցների հարցաթերթ, որը կհաստատվի մենթորների և դասընթացավարների կողմից:
2. **Դասընթացի նյութերի «թիրախայնացում» հիմնվելով կարիքների գնահատման և մասնակիցների ոլորտային ներգրավվածության վրա**: Ծրագրում ներգրավված դասընթացավարները ծրագրի համակարգողի կողմից տրամադրված կարիքների գնահատման արդյունքերի հիման վրա կիարականացնեն արդյունքների վերլուծություն և առավել թիրախային կմշակեն նախատեսված դասընթացի նյութերը:
3. **Թեմատիկ դասընթացների իրականացում: Դասընթացները իրականացվելու են երեք շաբաթների ընթացքում:** Ծրագրում ներկայացված յուրաքանյուր դասընթացի թեմա ներկայացվելու է 4 ժամերի ընթացքում (երկուական մուտքով): Դասընթացավարները տեսական նյութը կներկայացնեն գործնական օրինակներով՝ այն առավել հեշտ յուրացնելու նպատակով:
4. **Գործնական առաջադրանքների կատարում**: Գործնական առաջադրանքները կազմելու են թեմատիկ դասընթացների կարևոր բաղկացուցիչը: Այս գործողության շրջանակում ծրագրի մասնակիցները կմշակեն բիզնեսի առաջխաղացման մեծ նշանակություն ունեցող փաստաթղթեր՝ բիզնեսի զարգացման ռազմավարություն, թվային մարքեթինգի պլան, ներդրողների ներգրավվման հայեցակարգ և այլն: Գործնական առաջադրանքների կատարման ընթացքում ծրագրի մասնակիցները կստանան դասընթացավարների ցուցումները, առաջադրանքները, ապա առաջադրանքների կատարման ընթացքում, անհրաժեշտության դեպքում, կկարողանան դմել իրենց մենթորների աջակցությանը:
5. **Մեթորների հետ շաբաթական հանդիպում քննարկումներ**: Ծրագրում 8 սկսնակ բիզնեսների հետ աշխատելու համար կներգրավվեն 4 մենթորներ և յուաքանչյուրին կկցվեն երկուական ստարթափեր: Մենթորները պետք է առնվազն մեկ շաբաթական հանդիպում անցկացնեն իրենց կցված բիզնեսների հետ: Հանդիպումները անցկացվելու են դեմ առ դեմ ձևաչափով, բայց կարող են համակցվել նաև առցանց հանդիպում քննարկումներով:
6. **Մասնակիցների ոլորտային ներգրավվածությունից կախված միջազգային և տեղական փորձագետների հետ առցանց և դեմ առ դեմ հանդիպումների կազմակերպում**: Ծրագրի մասնակիցների կողմից ոլորտային հաջողակ փորձի ծանոթացման համար կկազմակերպվեն միջազգային և տեղական փորձագետների հետ հանդիպումներ: ՀՊՏՀ միջազգային գործընկերների ցանցից կընտրվեն մասնակիցների ոլորտներին առավել համապատասխանող երեք կազմակերպություններ և նրանց հետ կանցկացվի առցանց հանդիպում քննարկում: Տեղային փորձագետների հետ հանդիպումը իրականացվի կամ ուսումնական այցերի ձևաչափով ընտրված կազմակերպություն կամ մեկանգամյա բնախոսության ձևաչափով:
7. **Դասընթացների նյութերի հիման վրա ձեռնարկի մշակում (թվային տարբերակ)**: Դասընթացի նյութերի հհիման վրա կպատրաստվի տեսա-

գործնական ձեռնակ սկսնակ բիզնեսների առաջխաղացման վերաբերյալ: Ձեռնարկի խմբագրման և ձևավորման աշխատանքների համար կներգրավվի խմբագիր-դիզայներ:

8. **Մասնակիցների բիզնես արտադրանքի վերաբերյալ առաջխաղացման տեսահոլովակի նկարահանում**:Ծրագրի մասնակիցներին հնարավորություն կտրվի իրենց բիզնես գաղափարը/արտադրանքը հավանական սպառողներին ներկայացնելու համար պատրաստել մինչև մեկ րոպե տևողությամբ տեսահոլովակ:
9. **Միջոցառման անցկացում**: Միջոցառման անցկացման համար կիրականացվեն նախապատրաստական աշխատանքներ (հայտարարություն, հրավերներ): ՀՊՏՀ գործընկերային ցանցի միջոցով կտարածվի միջոցառման հայտարարությունը, ապա ծրագրում ներգրավված կամավորների կողմից կիրականացվի հրավիրյալների միջոցառման մասնակցության
10. **Որակի գնահատման վերլուծություն և բարելավման վերաբերյալ առաջարկների մշակում**: Որակի գնահատման համար կիրականացվեն հետևյալ քայլերը- կմշակվի դասընթացների արդյունավետության գնահատման հարցաթերթ, դասընթացի մասնակիցների կողմից գիտելիքների յուրացման գնահատման հարցաթերթ և ընդհանուր ծրագրից մասնակիցների բավարարվածության գնահատման հարցաթեր: Դասընթացների ավարտից հետո կանցկացվի բարարավածության գնահատման հարցումներ մասնակիցների շրջանում և գիտելիքների յուրացման հարցումը: Ծրագրի ավարտին կիրականացվի որակի գնահատման վերլուծություն և բարելավման վերաբերյալ առաջարկների մշակում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,	ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 128
ՖՆ գործառնական վարչություն	
Հ/Հ 900011031912	Հ/Հ 900018001876
ՀՎՀՀ 02565518	ՀՎՀՀ 01503224
Գլխավոր քարտուղար՝ Նարեկ Մելքումյան	Լիազորված անձ՝ Թադևոս Սարգսյան